

— Ամէն բանէ առաջ ծառայել Հայ-
րենիքին — Այս է ահա ամենէն մեծ պար-
տականութիւնը նոր սերունդին. ասոր
հաւատարիմ գործադրութիւնը ամենէն է

րախտապարտ զգացումին ապացոյցն է և
ամենէն շքեղ փառապսակը մեր Յորելեար
Վիպասանին լուսաւոր ճակտին:

Հ. ԵՍԱՅԻ ԳՌՈՒԶԵԱՆ

«ԴԱԻԻԹ ԲԵԿ»¹ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

ԵՒ

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ք

Չեռնարկելէ առաջ մեր առաջադրած
նիւթին՝ ուրախ ենք ըսելու թէ Ազգային
մամուլը — 1937-1938 — ամբողջ տարի
մը, որպէս դարադարձ Բաֆֆի ծննդեան,
ճոխարար արձանագրեց ինչ որ խօսուե-
ցաւ և գրուեցաւ Հայ մեծ վիպագրի կեան-
քին և գործերու մասին:

Ընդհանուր գծով՝ Հայութիւնը գրագէ-
տէն վեր գաղափարախօսն էր որ փառա-
բանեց Բաֆֆի մէջ, քանի որ նա գիտ-
ցած է իր վէպին մէջ ղենել այնքան խոր
հայրենասիրութիւն, և կեանքի գերագոյն
նպատակ՝ ազգի պատիւն ու դատը արիւնի
և մահուան գնով:

Այդ գաղափարներն են անշուշտ — հա-
մակ էութիւն Բաֆֆի վէպին — որ ըլլա-
լով անկախ ժամանակէ ու անջրպետէ,
միշտ կենդանի ու թարմ կը պահեն ա-
նոր վէպը, և հետեւաբար միշտ ալ կը
գործեն իրենց ներշնչողի և խանդավառ-
ղի դերով. ու միեւնոյն միջոց կը սիրցնեն
Բաֆֆին բոլոր անոնց՝ որ Հայու արիւն
և Հայու սիրտ կը կրեն:

Մեր նպատակէն դուրս է հոս վերլու-
ծել գրական Բաֆֆին՝ որ անշուշտ շատ
ցած կը մնայ հայրենասէր Բաֆֆի բար-
ձրութենէն. և իրաւացի է աւելի ներդաշ-
նակութիւն փնտռել բարդութեանը մէջ
տիպարներուն՝ որոնք դիւցազներ կը ներ-
կայանան մեծ վիպագրի գործերուն մէջ:

Աւելորդ չենք նկատեր յիշեցնել ընթեր-
ցողին թէ որպէս վիպագիր Բաֆֆի իր
ազգային պատմական վէպերուն մէջ՝ շատ

դիմած է երեւակայութեան՝ ամբողջացնե-
լու համար շէնքը որուն հիմերն ու զլխա-
ւոր սիւները միայն կ'ընձեռէր պատմու-
թիւնը՝ գրաւոր կամ աւանդական: Այդտեղ
Բաֆֆի իր ազատութեան մէջ է. իր աւելի
կամ նուազ ճարտարութիւնը և ընդլայ-
նումներու բնականութիւնն է որ խնդրոյ
առարկայ կրնայ դառնալ՝ գրական-գեղար-
ուեստական դատումին առջեւ:

Բայց երբ հարց է պատմական իրողու-
թիւններու, ճշմարիտ կամ հաւանական
դէպքերու, կարելի չէ զանոնք մերժել կամ
փոխել առանց բաւարար և բանաւոր փաս-
տի. հոս ճշմարտութիւնն և արդարութիւնը
կը միջամտեն, և իրենց դատաստանին կ'են-
թարկուի պատմական վէպի հեղինակը:

Այս տեսակէտով է որ պահ մը թերա-
ցած կը տեսնուի Բաֆֆի — ինչպէս պիտի
նկատենք յետոյ — «Դաշիր Բեկ»-ի մէջ, որ
իր պատմական վէպերուն ամէնէն խան-
դավառողն է, ըսենք նաեւ ամէնէն սըր-
տայոյզը վերիպումովը այն յոյսին՝ որուն
իրականացման համար այնքան արիւն և
այնքան զոհեր ողջակիզուեցան:

*
* *

Որքան որ «Լոյսը արեւելքէն» է կ'ըս-
ուի, սակայն հինէն, մանաւանդ մեր ազգը,
իր ուրախութեան և վշտի օրերուն ստէպ
Արեւմուտք կը դարձնէր իր աչքերն ու սիր-
տը, ըլլալ քաղաքակրթական — առեւտրա-
կան տեսակէտով, ըլլալ կրօնական: Եւ

ինչ զարմանք որ մեր եկեղեցին դեռ այն-
քան հաւատքով կը շարունակէ իր դա-
րաւոր օրհնութիւնն և աղօթքը «Օրհնեսցի
և պահպանեսցի... Արեւմտեան կողմն աշ-
խարհիս, և թագաւորութիւն քրիստոնէից»:
Եւ ահա յիշեալ կրկին տեսակէտով Ա-
րեւմուտքի մէջ կը գտնենք «Դաշիր Բեկ»-ի
երկու դիւցազները. Ստեփան Շահումեան՝
Վենետիկ, և Անտիք քահանայ՝ Հոռոմ:
Շահումեաններ արդէն կային Վենետիկ,
ինչպէս յայտնի է շատ մը պատմական
տեղեկութիւններէ: 1750ի Օգոստ. 1ին
հրատարակուած Վենետիկեան վաւերա-
գիր մը՝ մարդահամարով կու տայ թիւը Հայ
աշխարհիկ և եկեղեցական անձերու. անոնց
կարգին՝ չորս Շահումեաններու անունները²
(Saum) որոնց առաջինը՝ գաղութի աւա-
զանիին դասէն է — Ստեփանոսը (Stefano
Saum): Իսկ թէ այդ հայ դիւցազնը
երբ Վենետիկ եկած է՝ կը գտնենք մեր

ընթերցողներուն ծանօթ Հ. Յովհաննէս
Թովմաճանի ինքնակենսագրութեան մէջ:
Այս Հ. Յովհաննէս, դեռ պատանի,
1733 Յունիս 12ին Չմիւռնիայէն մեկնե-
լով կ'ուղեւորի Իտալիա՝ Միլիթար Աբ-
բահօր աշակերտելու համար. Օգոս. 5-ին
կը հասնի Լիվորնոյ՝ ուրիշներու հետ. հոն
կը մնայ քառասրիկա արգելաբանով՝ 62
օր. իր գալուստն իմացուցած ըլլալով մեր
երանաշնորհ Հիմնադրին՝ Սա հայրական
հոգածու սրտով իր Օգոստոս 22 թուա-
կրով կը պատասխանէ իրեն գրելով՝ թէ
Բարեկամի մը կը յանձնէ զինքը՝ որ
լաւ ընկերի մը հետ Վենետիկ դրկէ զին-
քը: Երկրորդ նամակով մը՝ — զոր ստորեւ
կը ղենենք ամբողջապէս իբրեւ նշխար մը
մեր երանաշնորհ Հիմնադրին օծուն գրչին
և իբրեւ նմոյշ դարու աշխարհաբարին —
Միլիթար Աբբահայր անունը կու տայ յի-
շեալ բարեկամին՝ Չաքար: Հ. Յովհաննէս

1. Nota di quanti Armeni e figli d'Armeni
adulti che si ritrovano in questa inclita Città
di Venezia, tanto secolari, quanto religiosi, in
questo di primo Agosto 1750.

2. Հ. Աւելան «Սիսական»-ին մէջ կու տայ Շահու-
մեանց ազգաբանութիւնը՝ քաղած Վենետիկ Հայոց Ս.
մեանց ազգաբանութիւնը՝ քաղած Վենետիկ Հայոց Ս.
մեանց ազգաբանութիւնը՝ քաղած Վենետիկ Հայոց Ս.
մեանց ազգաբանութիւնը՝ քաղած Վենետիկ Հայոց Ս.
մեանց ազգաբանութիւնը՝ քաղած Վենետիկ Հայոց Ս.

Ինչպէս կը տեսնենք Միլիթար Աբբահօր նամակէ մը,
Շահումեան ընտանիքը մտերիմ կերպով բարեկամացած
էր Միլիթարեան Ուիտիս հետ: Այդ բարեկամութեան ա-
նի Միլիթարեան կրօնաւոր էր և իրենց կրօնաւոր
բարեպաշտութեան՝ որ
1736ին վանքիս եկեղեցւոյն մէջ զեղեցիկ խորան մը կը
շինեն նուիրուած Ս. Լուսաւորէի, երեք յարգի պատ-
կերներով՝ որոնք գործն են Fr. Zugno հեղինակին, և
1737ին ալ նոյն խորանին առջեւ պատրաստեց ինչ իրենց
համար գերեզման մը, կափարիչին վրայ զնելով հետե-
ւեալ տապանագիրը:

ՂԱՓԱՆՑԻ ՇԱՀՈՒՄԵԱՆՑ ՏՈՒՆ
ՊԱՐՈՆ ԶԱԲԱՐՆ ՈՐ Է ԳՐԱԹԵԱՆ
ՊԱՐՈՆ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆԵՍԵԱՆ
ՊԱՐՈՆ ՆԱԶԱՊԵՏՆ ՊՕՂՈՍԵԱՆ
ԵՏՈՒՆ ՇԻՆԵԼ ԶԱՅՍ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ
ԵՒ ԸՆԴ ՆՄԻՆ ԶԱՅՍ ԳԱՄԲԱՐԱՆ
Ի ՅԻՇԱՏԱԿ ԵՒ Ի ԿԱՅԱՆ
ԲՆԱԻՑ ՈՐԲ ԵՆ ՃԻՂԴ ՆՈՅՆՈՑ ՏԱՆ:

Ստեփան զօրավարի հայրն է Վարդանէս և պապը՝ Սա-

հակ. ինք ամուսնացած է Վենետիկ՝ Մարիամ Վառ-
վառէ Ոտգալայի հետ հաւանօրէն 1746-7ին, և ունե-
ցեր է երեք զաւակ՝ որոնց երկուքը Յովհան և Մարթա
վաղամեակի, 1757ին անդին անանկացած կամ փակուած
է Շահումեանց վաճառատունը՝ որ դամաւկեան կերպաս,
հայելիներ և ապակեղէն ջահեր կը ծախէր: Ստեփան
Շահումեան մեռած է նախ քան 1782 թուականը, չի
զիտցուի սակայն Վենետիկ թէ անկէ դուրս:

3. Ի ձեռն Ստամպուլի Յարութեան պատմաբան
հասցի ի բարին ի Նազարէթ
ՅԱԿԻՊԵԱՆ

Բազմաւ օրհնութեամբ ծանիր՝ Յարութեան, զի ես
զգիրն քո առի. և իմացայ որ դու հետ Միլիթին գալ
չես ուզեր. այլ կուզես մինակ լինիլ, Նօրա համար ա-
հա ես զքեզ իմ գրովն յանձնեցի պարոն Չաքարիային,
որ քեզ տիրութիւն անէ. և ամենայն կերպիւ լաւ հոգ
տանի քո վերայ և զքեզ լաւ հաւատարիմ փութեալով
դրկէ աստ ի Վենետիկ: Եւ յուսամ թէ զքեզ յիւր տունն
տանի և պահէ չորս հինգ օր մինչեւ փութեալն Ֆիօրէն-
ցայու ելանելոյ լինի. և ապա զքեզ կալէսով կու յղէ
ի Ֆիօրէնցա, և այնտեղացն փութեալին կու յանձնեն
զքեզ և նա կու բերէ: Դու ջանացիր լաւ խելօք և զգաստ
կենալ թէ՛ այդ տեղը, թէ՛ ի ճանապարհին. և Աստուած
օգնական լիցի քեզ, Եւ ծանիր զի այդ պարոն Չաքա-
րիան մեզ մեծ բարեկամ է. և դու այնպէս գիտացիր որ
քեզ հօր պէս տիրութիւն կանէ, և զամենայն բանդ կու
հոգայ: Բաւ է:

ՄԻԼԻԹԱՐ ԱՐԲԱՑ ՀԱՅՐ

1733, Սեպտ. 19

յայտնապէս կ'ըսէ թէ Շահումեան մըն էր ան. «Եւ Մխիթար Արքայն անդրէն գրեաց զիր և յանձնեաց զՅարութիւնն (երրորդ դէմքով կը խօսի ինք իր մասին) ի Լիւվոնոյ պարոն Զաքարին Շահումեանց»։ Եւ թէ յառ ընկերը որուն հետ Վենետիկ պիտի գար՝ էր ինքը Ստեփանոս Շահումեան զօրավարը. «Ի նմին ժամանակի եկեալ էր յաւելելից պարոն Ստեփանն Շահումեանց, և էր ի տան պարոն Զաքարին (Շահումեանց) և կամէր գնալ ի Վենետիկ. ընդ անմիջ յուրի անկաւ յետ եօթն աւուրց (անշուտ նամակն առնելէն) և Յարութիւնն և հասին խաղաղութեամբ ի Վենետիկ (Հոկտ. 16). և զի այս պարոն Ստեփանն էր անձն բարի յոյժ և սիրէր մեծապէս զՅարութիւնն, տարաւ գնա ընդ իւր ի տուն իւրեանց ի սանթա Մարիա Գորմոզա առ Պարոն Նահապետն Շահումեանց. և ոչ թողացուցեալ գնա գնալ նոյն օրին ի վանս՝ ցուցին առ նա սէր և գգուանս. զի և ծանօթ իսկ էր պարոն Նահապետն հօր Յարութիւնին¹»։ Եւ և կ'աւարտէ խօսքը թէ յաջորդ օրը Ս. Ղազար կը մտնէ Հոկտ. 17ին, և կը դասուի կարգը 12 ընկերներու²։ Այսպէս ուրեմն Վենետիկ կը գրտնենք 1733ին Ստեփանոս Շահումեանը՝ մէկը Դաւիթ բէկի զօրավարներէն, ճիշտ երեք տարի վերջ այն ճակատագրական օրէն՝ երբ Սիւնեցիներու կամ Ղափանցիներու ներքին պատակտուններով ցիր ու ցան կ'ըլլար Հայ Մակարեան բանակը, որով և տխուր վերջաւորութեամբ կը մարէր Հայ ազատագրութեան համար վառուած սրբազան կրակը։

Ստեփանն ալ անշուշտ շատ մը քաջերու պէս վշտահար յուսաբեկ թողուց սուրն ու հրացանը և արցունքով հեռացաւ այն վայրերէն ուր այնքան հայ արիւն թափուած էր և այնքան յոյսեր օրօրուած, և եկած հոս՝ Վենետիկ երբեմնի քաջ զօրա-

կանը այժմ կ'ապրէր վաճառականի գործով իր արեւակիցներուն հետ՝ Շահումեան ընտանեաց զիրկը։

Շահումեան ընտանեաց մտերիմ բարեկամութիւնը Մխիթարեան Միաբանութեան հետ — ինչպէս տեսանք Մխիթար Արքայն և Հ. Յ. Թովմաճանի վկայութիւններէն — բնականօրէն առիթ տուաւ որ Ստեփանն իբրեւ ազանատես վկայ և աջակից զօրավար՝ պատմէր մանրամասն Դաւիթ բէկի պատերազմները մեր Վարդապետներուն, որոնք իմաստուն գտնուեցան զրի առնելու և անպագայ Հայ սերունդին կտակելու պատմական դրուագներ, ուր եթէ կան շատ դասեր և օրինակներ մեր ցեղի անօրինակ քաջութեան և դիւցազնութեան, միանգամայն կայ ողորակի կէտ մը, այն է մեր անմիաբանութիւնը որ կը ջնջէ քաջութեան և զոհողութեան ամէն պտուղ, որ սեւ կը ներկէ մեր ճակատագիրը։

Ահա այսպէս է որ ծագած են Վանքիս ձեռագրատունը գտնուող Ա. գ. 620 թիւը կրող երկու գրչագիրներ, մին մանր նոսրագիր, 33 էջ, որուն վրայ դրուած է պիտակ մը շեղագիր՝ հետեւեալ խօսքերով. «Պատմադրիս խափանցոյ ի գրուածոց Հ. Ղուկասու սերաս»։ ասիկա համառօտ է և անտարակոյս հնագոյն քան միւսը՝ որու մասին դեռ պիտի խօսինք։

Հ. Ղ. Աւիշան «Սիսական»ի³ մէջ յետ ակնարկելու Շահումեանի ներկայութիւնը Վենետիկոյ մէջ 1736-7 թուականներուն, կ'աւելցնէ. «Արդ յայսմ ժամանակի թեւադրեալ է Ստեփանոս և տուեալ յերիւրեւ միոյ ի Հարց աշակերտաց Մխիթարայ, այն է Հ. Ղուկաս Ստեփանեան Սեբաստացի (վրձ. 1752 Սեպտ.) զՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՄԱՐՏԻՅ ԱՍՓԱՆԵՑԻՈՅ» և այս հաստատութիւնը իր կողմէ իբրեւ յայտնութիւն կը համարի անծանօթ անուան մը

1. Ինքնակենսագրութիւն Հ. Թովմաճան. Թովմաճան. Եջ 15-17.

2. Որոնց երկրորդն էր կ'ըսէ «Ստեփանն Միւրեանն կոստանդնուպոլսեցի, որ է այժմ Արքայ հայր և ար-

ժամաժողովոյ յաջորդ անմիջական Մխիթարայ վեհ բաբունապետի. զոր Տէր հաստատ պահեստէ և շնորհացէ մեզ ընդ երկայն աւուրս (Ինքնակենս. անդ, էջ 17)։

3. Տե՛ս «Մեղրաձոր» զուլիւր, էջ 300-301.

նոյն գործի Յառաջադրանքի¹ մէջ «...Պատմադրիս խափանցոյ կամ Դաւիթ բէկի, զորոյ հեղինակ անծանօթ՝ ծանուցեալ է իմ (յէջ 301)»։ Այս զիս կը զարմացնէ, թէ ինչպէս Հ. Աւիշանի մանրախոյզ ու մանրաքնին աչքէն վրիպեր է վերեւ յիշուած ձեռագրի շատ հին պիտակը որ անպայման կանխագոյն է քան 1800 թուականը՝ զրի ձեւին և հնութեան անսխալ փաստով։

Բաց աստի՝ թէ իսկապէս Հ. Ղուկաս գրած է Դաւիթ բէկի պատմութիւնը՝ զի տենք իր իսկ միւս ծանօթ գործերէն, օրինակ «Համառօտ պատմութիւն թագաւորացն Հայոց, և աշխարհագրութիւն Հայաստանի, և աշխարհագրական բառարան, Հ. Ղուկաս Վ. Սեբաստացի», ձեռագիր նոսր, գործ թանկագին՝ գրուած ուրեմն կանուխ քան 1752ը, ուր երբ առիթը կ'ունենայ Սիւնեաց գաւառին վրայ խօսելու՝ նախ կը թուէ բերդաւոր վայրերը Ուրտն, Տաթեւ, Խնածախ, «Ընկեր» որ ունի զբերդ, ունի և զմեծ բերդն Խնծուրէսը՝ ուր Մխիթարեան տպաւոյն ի մերոս ժամանակի, որ իշխէր երկրին Խաթանու յետ մահուան Դաւիթ բէկին... Դարձեալ յետ մահուան Դաւիթ բէկին... Դարձեալ պէտ այժմ ընդարձակապէս առեալ ունի և զԳուրհամ, զՉափնդուր և զայլ գաւառս Սիւնեաց աշխարհին, սակայն յատկապէս Սիւնեաց աշխարհին, զՎալիձոր ուր բնակէր Դաւիթ պէկն ի մտանելն նորա ի Խաթան։ Այս Դաւիթ պէկ էր իշխանագուն և արիասիրտ՝ ազգաւ Հայ ինքն և զուն և արիասիրտ իւր. և առաքեցաւ ի ամենայն հետեւողք իւր. և առաքեցաւ ի յիշխանաց իշխանէն վրաց ի պահպանութիւն երկրին Խաթանու՝ ըստ խնդրոյ Հայոց բնակչացն։ Եւ թէ ո՞րպէս եմուտ ի Խաթան, և թէ ի գալ նորա ո՞րպէս ժողովեցան առ նա բնակիչքն Խաթանու և զորքան մարտս պատերազմաց ետուն ընդդէմ Պարսից և Օսմանցւոց և զորքան յաղթութիւնս արարին՝ տեսցեալ ի համառօտ պատմադրան գոր գրեցաք», և շարունակելով՝ կու տայ համառօտիւ Դաւիթ պէկի զօրավարներուն անունները իրենց բանակ-

ներուն թուով և կայանին կամ բանակետներուն անուններով, ինչ որ բաղդատութեան համար կարեւոր է՝ միւս երկու ձեռագիրներուն լուսարանութեան։

Այս պատմական — աշխարհագրական գործին զիրը յար և նման է յիշեալ «Պատմութիւն Ղափանցոց» ձեռագրին և երկուքն ալ նոյնպէս յար և նման Հ. Ղուկասի գրին՝ ծանօթ իր նամակներէն։ Ուստի կասկած չի մնար թէ այս է Հ. Ղուկասի ակնարկած աշխատութիւնը իր իսկական ձեռագրով։ Նշան նաեւ իր նախնական հարգատուութեան՝ ձեռագրին մէջ տեղ տեղ թուականներու և անուններու մը պակասը, լուսանցքի վրայ յաւելումներ և երբեմն թեթեւ սրբագրութիւններ։

Մինչ անցնելով մեր Ձեռագրատան միւս գրչագրին՝ որ նոյնպէս Ա. գ. 620 թիւը կը կրէ, յստակ և մաքուր նոսրագիր է, կանոնաւոր և կատարեալ թուականներով և անուններով, առանց ո՛ր և է սրբագրութեան, բաղկացած 61 էջերէ, ուստի գրեթէ նախորդին կրկինը. այս առաւելութեամբ որ, բացի զէպրերու մանրամասնութենէն, ունի վերջաբան մը՝ ուր կը ձգկէ անմիաբանութիւնը՝ պատճառ քայքայման և կործանման, ինչ որ կը պակսի նախորդ ձեռագրին մէջ՝ այն է Հ. Ղուկասի գրածին. և յետոյ կու տայ Դաւիթ բէկի զօրավարներուն և անոնց բանակներուն և բանակետներուն անունը. հուսկ Տէր Աւետիս քահանայ զօրավարին վրայ ներբող մը՝ նման կրիկեան երգիչներու ողբերգ — զովեստին ի պատիւ ասպետ Լիպարիտի։

Վերջին երեք ու կէս էջ գրաւող երկու փոքր հատուածներու գիրը բոլորովին տարբեր է նախորդ 58 էջերէն, յայտնապէս նոր է, ամենայն հաւանականութեամբ օրինակուած Հ. Ղուկասի ձեռագրէն։

Հ. Աւիշան որքան որ Դաւիթ բէկի պատմութեան հեղինակ Հ. Ղուկասը կը համարի, սակայն իրականին մէջ ինք անծանօթ կը թուի Հ. Ղուկասի ձեռագրին, որովհետեւ եթէ տեսած ըլլար մակագիրը Հ.

1. «Սիսական», էջ 9.

Ղուկասի անունով՝ իբր նորութիւն պիտի չյայտարարէր։ Դարձեալ, ոչ միայն Հ. Ղուկասի զրչէն ելած, այլ նաեւ մեր Բ. կոչած ձեռագիրն ալ կարծես անտես մնացած է Աւիշանէ, այն յայտնի փաստով որ՝ Սիւսկանին մէջ իր մէջբերումները, որ, երկար զրուակը «Անդ էր տեսանել» (էջ 256-7) զոր մենք ալ ստորեւ պիտի դնենք (էջ 180-181) ուղղակի Արգար Գուլամիբեանի «Դաւիթ թեկ» հրատարակութենէն են և ոչ մեր Մխիթարեան ձեռագիրներէն կամ Չամչեանէ։

Հ. Միքայէլ Չամչեան ալ իր կարգին Բ. ձեռագիրն է որ կը հետեւի ընդհանրապէս, ինչպէս կը ցուցնեն ստորեւ մէկ երկու համեմատութիւններ։

Հ. Մկրտիչ Ազեբեան միայն այս երկորդ ձեռագիրն է որ տեղով և թուով կը յիշէ իր ձեռքով գրած վանքիս գրչագիրներու ցանկին մէջ, և բնականաբար ոչ Հ. Ղուկասի անունով այլ ընդհանուր և անորիշ ձեռով իբր մերիններէն գրուած. «ՂԱՓԱՆՅԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ, ոչր գրիւ գործք Դաւիթ պեկիւն և գործակցաց ևորս՝ Միխրաբ զորավարի և Տէր Աւետի ևն. գրեալ ի ՄԵՐԱՅՈՅ՝ առեալ ի բերանոյ նոյն Տէր ԱԻԵՏԻ ԵՒ ԱՅԼԱՅ՝»։

Մերայոց յոգնակի ձեւը հաւանորէն խմբագրութիւն մը կ'ենթադրէ, այսինքն քանի մը հոգւոյ զրաճները ամփոփած և ձուլած, որոնց մէջ անշուշտ հիմ եղած է Հ. Ղուկասի համառօտ գրութիւնը։

Հ. Մ. Ազեբեանի վկայութիւնը հոս թանկագին է մեզի համար, անով որ ոչ միայն ծանօթ Հ. Ղուկասէն զատ ուրիշ գրողներ ալ կ'ենթադրէ, այլ նաեւ նոր

պատմական աղբիւրներ կը յիշէ, այսինքն մինչեւ ցարդ յիշուած Ստեփան Շահու մեանէն զատ՝ Տէր Աւետիսը, մանաւանդ թէ նախ Տէր Աւետիսը և ապա ուրիշներ։ Այդ վկայութիւնը հուսկ խնդրական կէտ մը կը լուսարանէ Տէր Աւետիքի շուրջ, ինչպէս պիտի ստիպուինք յետոյ յիշել։

Հ. Մ. Ազեբեանի լուրջութիւնը Հ. Ղուկասի անուան և գործի մասին, ինչպէս նաեւ Հ. Աւիշանի նորօրինակ դիւրը այդ անուան շուրջ անով կը մեկնուին՝ որ Հ. Ղուկասի բուն ձեռագիրը իբրեւ նախնական գործ և ինչ ինչ տեղ թերի և խառնակ՝ մնացած է դիւանի մէջ հեղինակին հոս յիշուած և ուրիշ քանի մը ձեռագիրներուն հետ։

Արդարեւ ինչպէս յայտնի է ձեռագրին վրայ զրուած թիւէն և նշաններէն և համապատասխան ձեռագրաց ցուցակին մէջ անցուած շեղագիր թարմ գրէն՝ ողբ. Հ. Աւետիք Վ. Գազէզեան է որ զայն վերջերս գետեղած է ձեռագրատան մէջ 1928-1929ի շրջանին։ Նշանակենք հոս որ Չամչեան իր պատմութեան մէջ ոչ մէկ յիշատակ կամ ակնարկ ունի Ս. Շահու մեանի և զօրավար Աւետիք քահանայի մասին որպէս պատմող աղբիւրներ Դաւիթ բէկեան պատերազմներուն։

Իբրեւ հետաքրքրական բաժին մեր ընթերցողներուն՝ հոս սիւնակներով մէկ երկու նմոյշ կը բերենք վերեւ յիշուած կրկին ձեռագիրներէն՝ բաղդատուած Չամչեանի տպագրուած պատմութեան հետ, ուր պատմականէն զատ պիտի տեսնուի բ. ձեռագրին լեզուն որ Մակարայեցւոց զրբին մարտական շունչը կը զգացնէ։

Զ. (Ա.) - Հ. ՂԱԻԿԱՍԻ

Եւ այլազգիքն իբրեւ լուան, թէ առեւթ պէկն անցաւ ի գէաւունդորն. և և սափի դուլին, և որդին զազու, և որդին շահիւլաւ մին երկոտասան հազարաւ. և անցին յաւանկեզայ սարոյն ի կենեւ ուզն և զբոլոր գիւղորայսն այրեւցին, և լուր էհաս տաւութ պէկին վասն այսր ամենայնի ի չաւունդորն, զի յաւուրսն յայնոսիկ բնակէր նա ի ծով և և չորս հաւազարաւ ի վերայ այլազգեացն, և

Զ. (Բ.) - ՄԻԽԻԹ. ՀԱՐՅ

Արդ իբրեւ լուր եղեւ ի յուրդուար, թէ Դաւիթ անցեալ է ի չափնդուր, ելին կազմեցան պատրաստեցան սափի դուլին, որդին և որդին շահիւլաւմին, և և առեալ ընդ իւրեանս զօր բաւում, իբր երկոտասան հազարաւ զայնին հասանէին ի կողմանս կենեւուզայ, և անցեալք ի յաւանկեզայ սարոյն զամենայն գիւղօրէսն կենտուզայ այրեցին։ Ապա զուժկան հասանէր առ Դաւիթ

ՊՏՄ. ՉԱՄՉԵԱՆ Գ, 789

Գուժկան եհաս առ նա անդ, թէ ժամանեցին ի կենտուզ այլազգիք Որդուվարայ երկոտասան հազար զօրօք, և այրեցին զգիւղօրէս, Փութացաւ Դաւիթ, և էաւ ընդ իւր երկու հազար այր եւ ի սահմանաց անտի, և ստիպաւ հասեալ ի գաւառն կենտուզ՝ նստաւ ի կաւեր մօտ ի Մեղրու գետ։ Իսկ այլազգիք՝ որք բանակեալ էին յայնկոյս գետոյն, իբրեւ տեսին զարսն Դաւիթ, կաւան զգետափն՝

եզիտ զնոսա ի լիչքին, որ է յայնկոյս զօղօղ գետոյն։ Իսկ թուրքն բանակեալ էր ի լիչին. իբրեւ տեսին զնոսա, ելին արտաքս և եկին ի գողթ, որ է ի գետափն և ոչ ետուն անցանել զգետն, և սոքա աստի, և նոքա անտի մարտ եղեալ կողմէին յառաւօտէ մինչեւ ի 24 ժամ աւուրն, մինչեւ ի զաւն նոցա ի ջիւղանդ ի զլուխ դաշտուն։ Եւ ի զիշերի տաւութ պէկն էանց ի հաւին ձորն։

Իսկ մինթարն փախուցեալ ի նոցանէ գնաց վերստին զօրս գումարեալ ի հայոց, և ի թուրքաց, վերստին խորտակեաց զօմանցին, և դարձոյց յետս զբաղաքսն, և զամուրս ի նոցանէ։ Եւ և զուրդուար քաղաքն և կոտորեաց զամենայն որ ինչ էր ի նմա, և էաւ ընդ վաթսուն բնիկն ուղտուց։ Եւ ինքն դարձ արարեալ անտի եկեալ ժամանակ ինչ բնակեցաւ ի յամուրն խնձորէկս, և անդ իւրոց զօրացն հարեալ թոփով սպանին. և վաղվաղակի հայոցն հատեալ զզուլս նորա տարին առ փաշայն թափրիզու, և նա ըստ արժանեացն հատոյց նոցա, հատանելով զզուլս անգամացն, և ասէ զիւրդ իշխեցիք զայդպիսի քաջ այր սպանանել ի զուր տարապարտուց։

վասն այսր ամենայնի. Եւ նա վաղվաղակի առեալ ընդ իւր արս միմեանս՝ սոքա աստի, և նոքա անտի՝ յառաւօտէ մինչեւ ցերեկոյ, անկան յերկուց կողմանց բազումք. և առեալ եւս ի հայոց։ Եւ իբրեւ զիշերն ի վրայ եհաս, խոյս ետ Դաւիթ ի տեղօղէ անտի. զի պակասեցան զօրք իւր. և գնաց ի հաւինձոր։

Այլ Մխիթարն փախուցեալ ի նոցանէ երթալով վերստին զօրս ժողով լինէր ի հայոց և ի թուրքաց, զզօրսն օմանցւոցն խորտակէր, և աւնոյր զվրէժ ի նոցանէ՝ զբազում ամուրս, և զբաղաքս ի նոցանէ թափէր, և երթալով զուրդուար քաղաք պաշարէր, և իբրեւ զրոմար ամէր զայն ի նոցանէ, զամենեւեան ի սուր տուսերի սատակէր, և զաւար բազում աւնոյր ի նոցանէ, և զհարիւր վաթսուն բնիկն ուղտուց։ Եւ անտի դարձ ամուրն, և երթալով ժամանակ ինչ ի մեծ բերդն խնձորէսը բնակէր. և անդ յիւրոցն հարեալ թոփով մեռանէր յամի տեառն 1730. յետ երկուց ամաց իշխեցոյն. զի նա յօրէ յորմէ հեռէ ի խնձորէսը բնակէր, ասէին ցնա հայ բնակիչքն, եւ գնաւ աստի ի յամուրն քո. և նա ոչ լսէր նոցա. ուստի յաւուր միում հարին գնա ի պարսպէն և սպանին, և հատեալ զզուլս նորա առին գնացին ի թափրէզ առ փաշայն օմանցւոց. իսկ նա իբրեւ ետես զայն զարմացաւ յոյժ. և ի սրտմտութիւն բարկութեան բողբոջաւ ի վերայ այնպիսոյ անզգամութեան նոցա, և ասէ ո՛վ անօրէնք, և ամբարիշտք. զիւրդ իշխեցիք ի զուր տարապարտուց սպանանել զտէրն ձեր, և զայդպիսի քաջ այր. և հրամայեաց հատանել զզուլս ամենեցուն նոցա, որք տաւան զայն, և ըստ արժանեացն հատոյց զհատուցումն նոցա։

և ոչ ետուն նոցա թոյլ անցանել ընդ գետն։ Ապա մարտ եղեալ ընդ միմեանս՝ սոքա աստի, և նոքա անտի՝ յառաւօտէ մինչեւ ցերեկոյ, անկան յերկուց կողմանց բազումք. և առեալ եւս ի հայոց։ Եւ իբրեւ զիշերն ի վրայ եհաս, խոյս ետ Դաւիթ ի տեղօղէ անտի. զի պակասեցան զօրք իւր. և գնաց ի հաւինձոր։

Չայն իբրեւ զիտաց Մխիթար, ի նմին զիշերի կախեալ ընդ պարսպն՝ փախեալ զաղաւ... Վերստին զուժկաւ առ ինքն զարս ամենայն և զօրաւորս՝ յարձակեցաւ ի քաղաքս թշնամեաց իւրոց. և վրէժս ինդրելով ի նոցանէ վասն կոռճի և որդուցն՝ խորտակեաց զզօրսն թիւն նոցա և թափեաց ի նոցանէ զբազում ամուրս և զբաղաքս՝ զօրս առեալ էր նախ դաւթին։ Եւ պաշարեալ զքաղաքն որդուվար՝ էաւ և զայն. և կոտորեաց ի նմա զամենեւեան ի մեծամեծաց մինչեւ ցերեկոյն. և էաւ զամենայն աւար նոցա։ Եւ եկեալ ի բերդ մի՝ որ կոչիւր խնձորէզը, բնակեցաւ անդ աւուրս ինչ. իսկ ոմանք ի հայոց եղեւոց անդ՝ ոխս ունելով ընդ նմա՝ հարին գնա հրացանիւ. և հատեալ զզուլս նորա՝ տարան առ բղեշին ի զաւրէժ։ Չայն իբրեւ ետես բղեշին, բորբոքեցաւ բարկութեամբ ի վերայ արանցն, և ասէ. արք անօրէնք՝ որդիք կորստեան, զիւրդ իշխեցիք սպանանել ի զուր տարապարտուց զիշխան ձեր, և կորուսանել յերկրէ զայդպիսի այր զօրաւոր. և անդէն հրամայեաց հատանել զզուլս նոցա։

Այս բաղդատութիւններէն յետոյ սաւկայն կարեւոր բաղդատութիւն մը կայ ընելիք՝ մեր վենետիկեան աղբիւր - ձեռագիրներուն՝ Արգար Ստեփաննոսեան Գուլամիբեանցի հրատարակութեան հետ համեմատուած։ Վերջինս նորանոր փաստեր պիտի տայ մեզի նախ պատմող աղբիւրներու մասին, և յետոյ զրի աւնողներուն։

ԱՐԱՄԱՐԱՆՊ 8 ՈՒՆԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ 1938

Մեր ցարդ ըսածներէն բնական է պիտի հետեւի թէ Մխիթարեան Հայրերու գրի առած պատմութիւններն են որ Բաֆֆիի «Դաւիթ թեկ»ին աղբիւր ծառայած են. անշուշտ, այդ է հետեւութիւնը. և սաւկայն նկատելի կարեւոր պարագան այն է որ Բաֆֆի երբեք բախտը չէ ունեցած ո'ր և է կերպով տեսնելու կամ օգտուելու



ուղղակի մեր վեհեակեան կրկին ձեռա-
գիրներէն՝ որոնց վերեւ ծանօթացանք:

Բաֆֆի Հ. Միքայէլ Չամչեանի պատմու-
թենէն զատ՝ ճանչցած է միայն Արգար Ստե-
փանոսեան Գուլամիրեանցի հրատարակու-
թիւնը կատարուած ի վաղարշապատ — էջ-
միածին 1871ին: Այդ գործին բացատրա-
կան երկար տիտղոսն իսկ շատ մը տեսա-
կէտներ կը պարզէ՝ որոնք պիտի լուսարանեն
կամ հաստատեն մեր նախապէս ըսածները
նկատմամբ Դաւիթ բէկի պատերազմները
պատմողներուն ու գրի առնողներուն:

Ահա տիտղոսը մատնանշուած գործին.

«ԳԱԻԹ ԲԵԳ. ընտիր պատմութիւն Դա-
ւիթ բէկին եւ պատերազմաց Հայոցն խա-
փանու, որք եղին ընդդէմ՝ Թուրքաց ի մե-
րում Ժամանակի, այն է յամի Տեառն 1722,
եւ Հայոց 1171:

Զորս կտուռ գրեւ, որք ի սկզբանէ միջեւ
ցմախման յառաջադէմ չեալք էին յամենայն
պատերազմուէն, և ակաւստես իրացն եղե-
լոց, այսինքն Ստեփաննոս Վրդապետեան, որ
ի տանէն էր Շահնուսեան, ի գաւառէն փոքր
Սիւնեաց, և յաւանէն Եփեսոսեանց, և այլ
ունակք ընդ նմա,
. Վարդապետի . . . »

Հոս, ինչպէս յայտնի է, նախ կ'աւ-
նարկուի Ժամանակակից դէպքերու որոնք
տեղի կ'ունենան 1722ին իբր « ի մերում
Ժամանակի ». ուրեմն ԺԸ դարու գործ է,
զոր Գուլամիրեան փոյթն ունեցած է հրա-
տարակելու մեծ գուրգուրանքով:

Յետոյ կ'ըսուի թէ (Դաւիթ բէկի) պա-
տերազմներուն մէջ յառաջադէմ ակաւս-
տեսներ են որ գրել տուեր են, և յականէ
անուանէ կը յիշատակէ Ստեփաննոս Շա-
հնուսեան և զեռ ոտրիւնք ալ իրեն հետ:
Այս վերջին բացատրութիւնն էր որ տե-
սանք վերեւ, վանքիս ձեռագրաց ցուցա-
կին մէջ, գրուած Հ. Մկրտիչ Աւգերեանէ

1791ին՝ Դաւիթ բէկի պատմութեան յի-
շատակութեան մէջ, այս տարբերութեամբ
միայն որ հոն Աւետիք քահանան էր որ
յայտնապէս շեշտուած էր, իսկ հոս՝ Ստե-
փանոս Շահնուսեան:

Սակայն իսկոյն հոս ըսելու ենք թէ
Արգար Գուլամիրեանի ձեռագիրը իր սկիզ-
բով խարդախուած է: Սկիզբը ջնջուած
է Միքայէլեան Վարդապետի՝ Հ. Ղուկաս
Ստեփանեանի անունը՝ որ ամենայն հա-
ւանականութեամբ կար նախապէս: Գու-
լամիրեան անդրադառնալով կը գրէ. « Բայց
ցաւում ենք շատ, որ չկարողացանք գտնել
այս ազնիւ Պատմագրութեան բուն հեղի-
նակը, պատճառ անխոհեմ և անզգայ մար-
դիկ անհետացրել են սոյն ազնիւ հեղինակ
վարդապետի անունը, ջնջելով նորա ա-
նունը և տոհմանունը՝ մի միայն վարդապետ
բառը թողելով, ինչպէս մենք եւս թողու-
ցինք ահա, որի համար շատ տեղեր և
պատմագրութիւններ փնտռելով չկարողա-
ցանք և ոչ մի տեղ գտնէ ծանօթութիւն
ինչ գտնել »:

Պիտի տեսնենք յետոյ որ խարդախուած
է նոյնպէս Աւետիք քահանայի վերաբե-
րեալ պատմական կէտ մը՝ զրքին վերջը:
Բրոֆ. Ն. Ադոնց Ալիշանի « Սիւսական » էն
փոխ առնելով իսկոյն կը յայտնէ եղ-
ծուած անունը. « Յայտնի է որ ծածկանուն
վարդապետը Հ. Ղուկաս Ստեփանեան Սե-
բաստացին է, Միքայէլի աշակերտ: Նա
է որ գրի է առել ինչ որ պատմել է Ստե-
փանոս Վրթանիսեան Շահնուսեանը » եւն:

Իսկ Բաֆֆի որ Չամչեանի պատմու-
թենէն զատ իր առջեւ ունէր Գուլամի-
րեանի այդ հրատարակութիւնը վերնագրի
բացատրական մանրամասնութիւններով՝
սկիզբով ձեռով մը կ'արտայայտուի ա-
նոր մասին իր « Խամսայի Մեկիքոթիւն-
ներ » ուն մէջ. « Այդ հետաքրքիր պատ-
մութեան հեղինակը մինչեւ այսօր մնում

գեան հարիւրամեակի առթիւ (1887-1937), հատորին
մէջ, էջ 122-148 Տպ. Խ. Մաթիկեան, Բարեգ, 1937,
էջ 168.

3. Էջ 395.

1. Տես հրատարակութեան յառաջաբանը, էջ Ժ.
2. Տես « Դաւիթ բէկ » վէպի պատմական հիմք և գա-
ղափարախօսական արժէքը » յօդուածը՝ « Բաֆֆի-կեանքը,
գրականութիւնը, յիշողութիւններ » Լոյս ընծայուած ծնուն-
դի

է անյայտ. ձեռքից ձեռք անցնելով հե-
ղինակի անունը եղծուեցաւ: Ես այժմ ան-
տեղի եմ համարում խօսել այդ մասին,
միայն կը յիշեցնեմ հայկական առածը.
Գողը գողից գողացաւ, Աստուած տեսաւ,
զարմացաւ »:

Բաֆֆիի անծանօթ էին Միքայէլեան
ձեռագիրները, ուստի թերեւս ներքի հա-
մարուի իրեն այդ արհամարհական վե-
րաբերումը:

Մեզի կը մնար սակայն քննել յարա-
բերութիւնը Միքայէլեան ձեռագիրներուն
և Գուլամիրեանի բնագրին, հետեւեցնելու
համար թէ արդեօք վերջինս անկախ հե-
ղինակութիւնն է, թէ՛ Միքայէլեան ձե-
ռագիրներուն մէկին կամ միւսին օրինակը,
կամ վերջապէս փոխուած ձեւը՝ միշտ
նոյն աղբիւրներէն:

Դժուար չեղաւ մեզի կատարել այդ
համեմատութիւնը, որուն իբրեւ արդիւնք
իսկոյն պիտի ըսենք որ Միքայէլեան Բ.
ձեռագիրը (անանուն հեղինակի և կատա-
րեալ ձեւով՝ ինչպէս վերեւ կրկնեցինք)
որքան կը խոտորէր իր մանրամասնու-
թեամբ և նորանոր պարագաներով Ա. ձե-
ռագրէն՝ իր ամբողջութեամբ, սակայն,
մէն մի պարբերութեամբ և ընդհանրապէս
բառառաւ կը զուգընթանար Գուլամիրեանի
հետ: Եւ որովհետեւ ծանօթ է մեզի վե-
նետկոյ մէջ ներկայութիւնը Ս. Շահնու-

մեանի և իր թելադրական պարագան,
կասկած չի մնար որ Գուլամիրեանի ձե-
ռագիրը Միքայէլեան Բ. ձեռագրին մէկ
օրինակն է, ինչպէս կը վկայէ նաեւ իր
վերտառութեան մէջ Շահնուսեանի անունը:

Անշուշտ դժուարութիւն չի յարուցաներ
միեւնոյն իմաստով և բառերով նախադա-
սութեանց մէջ բառերու կարգի փոփոխու-
թիւնը՝ որուն ստեղծ կը հանդիպինք Գու-
լամիրեանի քով: Աւելի նկատելի կէտ մըն
է բառերու փոփոխութիւնը համապատաս-
խան հոմանիշով՝ որ նոյնպէս յաճախակի
կը տեսնուի: Երկու պարագաներն ալ օրի-
նակովին քմահաճոյքին վերագրելու է.
ապա թէ ոչ անհնար է մեկնել երկու
անկախ տարբեր գործերու մէջ նոյնքան
երկարութիւն պատմութեան, նոյն նախա-
դասութիւններով և նոյն կամ նոյնիմաստ
բառերով:

Որքան որ Գուլամիրեան իր առջեւ ու-
նեցած ձեռագրին վրայ զմայլած կ'ըսէ
թէ « գրիչը համարեա թէ Ս. Թարգման-
չաց ոսկեղենիկ դարու ճաշակն է կրում »
եւն. սակայն տեղ տեղ բայերու ձեւեր
նամիկ կամ ունիթորական կերպարանք
առած են հոն, ինչպէս կը տեսնուի յայտ-
նապէս հետեւեալ օրինակներուն մէջ, ձե-
ւեր որոնք խղճամիտ Գուլամիրեանի չեն,
այլ բուն իսկ ձեռագրին՝ զոր հաւատա-
րիմ կերպով հրատարակած է.

ՄԻԽԱՅԻԼԵԱՆ ԶԵՌ.

- | | |
|------|-----------------------------------|
| էջ 3 | ի բաց մերժէր |
| 18 | ի բաց լիցի |
| 22 | հնաս... հինիցն թուրքաց |
| 29 | գերեալս ի նոցանէ |
| 35 | զամենակալն Աստուած |
| 39 | յոյս փրկութեան |
| 40 | զառաջին յարձակեցան |
| 44 | փախստեալքն... պաշարեալ |
| 49 | միւսանգամ խորտակեցաւ |
| 56 | ի սրտմտութիւն բարկութեան բրդեցաւ. |

1. Կը համարինք թէ այստեղ աւելորդ չըլլայ յիշել,
ինչպէս Բրոֆ. Ն. Ադոնց ալ վերի վկայութեան հետ կը
նշանակէ, թէ Կարապետ Վրդ. Շահնուսեան ալ 1840ին
գրի առած է Դաւիթ բէկի պատմութիւն մը՝ պատմութեան
Դաւիթ բէկի մարտակից քաջերէն Պալի թոռան՝ Ստե-

ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆ ՀՐՏ.

- | | |
|------|--------------------------|
| էջ 4 | ... մերժիւր |
| 23 | ի բաց լիցիցէր |
| 28 | Հինիցն թուրքաց հասանի |
| 37 | զգերեցեալսն ի նոցանէ |
| 44 | զԱստուածն ամենակարող |
| 49 | յոյս կեցութեան |
| 50 | առաջինն... յարձակեցան |
| 57 | փախստեալքն... պաշարեցեալ |
| 63 | զարձեալ խորտակիւր |
| 71 | սկսաւ սրտմտիլ. |

փան քահանայի կողմէն, գործ մը որ դժբախտաբար կոր-
սուած է, և Շահնուսեանի վրդ. մեծագէտ կ'ողբայ
անոր վրայ, ինչպէս ծանօթ է՝ Ստեփաննոս Օրթեկեանի
պատմութեան յառաջաբանին մէջ գրածէն, էջ 7-8 (տպ.
Փարիզ 1859).

Այժմ ըստ մեր խոստման տեսնենք քա-
նի մը համեմատական հատուածներ Մը-

Ձ. (Բ.) ՄԻԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Թե՛ ո՞րպէս և վասն է՞ր եղեւ Մուսն
դաշրի պէկին ի խափան, և
քե՛զիս ինչի միացան ընդ նմա
բնակիչք գաւառին և ընդ-
դէմ դարձան բոլորքս։

Ի ժամանակին յորժամ զօրացան ազգն աղ-
ուանից թուրքաց ի կողմանս հնդկաց ի դան-
տահար գաւառին, և յարձակեցան յաշխարհն
պարսից ասպատակաւ աւար հարկանել մինչեւ
ի գալ պաշարել նոցա, և առնուլ զսպահան քա-
ղաք, և սատակել զշահ հիւսէին արքայն պար-
սից, որ եղեւ յամի տեառն 1721. և ի թուին
հայոց Ռ. Ճ. Հ.։

Ի յայտ և ի սոյն ժամանակի ի հիւսիսոյ հայոց
լակզի թաթարքն ի կողմանս հայոց, և աղուա-
նից արշաւեցին և զգիւղօրէսն գանջու և շամա-
խու ասպատակեալ աւար առին, և զագուլեցին
ի մուսապէկեան տոհմէ՝ զիշխանն շամախ ըս-
պանին, և զամենայն զօրաւոր դիմակացսն սա-
տակեցին, և ժողովուրդս երկրին, և զկանայս
և զմանկունս գերի վարեցին, զորոց չունիմք
և զմանկունս գերի վարեցին, զորոց չունիմք
յայտմ վայրի մի ըստ միոջէ պատմել։

Եւ կամ թէ՛ զիմիւր զայսչափ չարիս տեսեալ
հայոց բնակչացն քուքարացւոց և ուտացւոց ըն-
դէմ ելին նոցա ի բաց վանել, գունդ կազմեցին,
զէն զգեցան պատրաստեցան ի պատերազմ, ճա-
կատ կազմեցին առ թարթար գետովն, ընդդէմ
ամենայն յարձակելոցն յասպատակութիւն երկ-
րին իւրեանց, որք և զանուն առին այսու և
կոչեցան մեծ սղնախ մինչեւ ցայսօր։

Եւ թէ՛ որպէս հարին վանեցին, թէ՛ զլազկին,
թէ՛ զպարսիկն, և թէ՛ զօսմանցին ոչ ունիմք
գրել։ Այլ միայն զխմբելոյն հայոց յեթնաբեր-
դեան գաւառին խափանու եղելոցն ձեռն արկա-
նեմք պատմել։ (էջ 1-2)։

Քանի մը հատուածներ ալ Գ. գրուխէն

Անդ էր տեսանել զայն ահեղ տեսիլ կատա-
ղեալ զօրացն աղմուկ աղաղակին. զի իբրեւ
քենայսն կանգնեցին, հարիւրաւոր և հազարա-
ւոր դրօշակակիրքն յառաջ խաղացին. ապա
զօրքն ամենայն զկնի հեղանէին, իբր յորձանս
յորդախաղաց գետոց ահագին գոջամբ, և կամ

խիթարեան ձեռագրէն և Գուլամիւրեանի
հրատարակութենէն։

ՀՐԱՏ. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Թե՛ վասն է՞ր, և կամ ո՞րպէս եկն եւնուտ
Դաշիր քեզն ի խափան գաւառ։ Եւ քե՛զիս
եղին միացան ընդ նմա ամենայն բնակիչք գա-
ւառին, և ընդդէմ դարձան թուրքաց։

Ի ժամանակին՝ յորժամ զօրացան ազգն Աղ-
ուանից թուրքաց՝ ի կողմանս Հնդկաց՝ ի Ղան-
դահար գաւառին, և յարձակեցան յաշխարհն
Պարսից ասպատակաւ աւար հարկանել, մինչեւ
ի գալ՝ պաշարել նոցա, և առնուլ իսկ զՍպա-
հան քաղաք, և սատակել զՇահ՝ Հուսէին ար-
քայն Պարսից, որ եղեւ յամի Տեառն 1721, և
ի թուականութեանս Հայոց ՌՃՀ (1170)։

2. Ջայսու ժամանակաւ Լակզի թաթարքն ի
կողմանցն հիւսիսոյ ի Հայտ և ի յԱղուանս ար-
շաւեցին. և զգիւղօրէսն Գեանջաու, և Շամա-
խու ասպատակեալ աւար հարկանէին, և զԱգու-
լեցի Մուսաբէգեան տոհմէ՝ զիշխանն Շամախու,
ի մահ մատնէին, և զամենայն զօրաւոր դիմա-
կացսն առ հասարակ սատակէին, և զժողովուրդս
երկրին զկանայս, և զմանկունս ի գերութիւն
վարէին, զորոց մի ըստ միոջէ յայտմ վայրի
չունիմք պատմել։

3. Եւ կամ թէ՛ զիարդ զայսչափ չարիս տե-
սեալ Հայոց բնակչացն Գուգարացւոց, և որ
չուրջ էին բնակիչք Հայոց, զինու զարդու յօրի-
նեցան, ի մարտ պատրաստեցան միահամուռ
ճակատեալ առ թաթար գետովն ընդդէմ ա-
մենայն արձակելոցն ի յասպատակութիւն երկրի
իւրեանց (որք և զանուն առին այսու, և կոչե-
ցան մինչեւ ցայսօր մեծ Սղնախ)։

4. Եւ թէ՛ ո՞րպէս քաջացան սոքա, հարին վա-
նեցին թէ՛ զԼակզին, թէ՛ զՊարսիկն և թէ՛ զՕս-
մանցին, ոչ ունեմք գրել. այլ միայն զխմբելոցն
Հայոց ի յեթնաբերդ գաւառին խափանու ե-
ղելոցն ձեռնարկեմք պատմել։ (էջ 1-2)։

13. Անդ էր տեսանել զայն ահեղ տեսիլ կա-
տաղեալ զօրացն աղմուկ աղաղակին. զի իբրեւ
զմեքենայսն կանգնեցին, հարիւրաւոր և հազա-
րաւոր դրօշակակիրքն յառաջ խաղացին, ապա
զօրքն ամենայն զկնի հեղանէին իբր յորձանս
յորդախաղաց գետոյ ահագին գոջամբ, և կամ

իբրու ամենի ալիս ծովու յուզեալք ի բռնութենէ
թենէն հողմոց դարիւ և դարիւ գային մի զմիով
անցանէին, և ի մեքենայից անտի ի վերայ պարըս-
պացն դիմէին, և առ հասարակ յերկոցունց
կողմանց ձայն փողոյ, և ձայն թմբկաց, զոչին
զօրաց, շառաչուն հրալից գնդակաց, ճայթմունք
հրացանից, զականջս խլացուցանէին։

Իսկ որք ի ներքս էին իբրեւ գայն ահեղ տե-
սիլ ի յամրոցէ անտի տեսանէին զգնդաց գնդաց
այլասեռիցն՝ դրօշու դրօշու պատրաստութիւն,
զնշանացն փողփողել, և զճառագայթս զինուցն
զինուորաց, զգանգակսն հնչեցուցանէին, զնշխարս
ձեռաց սրբոյն մինայի ի բազմոցի դնէին, և ա-
մենեքեան անկեալ առաջի սրբոյ սեղանոյն առ
Աստուած գոչէին. եպիսկոպոսունք, քահանայք,
ամենայն ժողովրդականք, և կուսանք (զի անդ
էր նաեւ մենարանինչ կուսանաց, ուր բնակէին
քառասուն կամ յիսուն կուսանք) զի ամենեքեան
զմահն առաջի աչաց ունէին. (էջ 138-39)։

Ո՞վ սքանչելեացս, ո՞վ մեծի ողորմութեանցն
աստուծոյ, երեք հարիւր վառեալք ի յութերորդ
ժամու աւուրն ձայն ետուն, խրախոյս բարձին,
յարձակեցան միահամայն ի վրայ եօթանա-
սուն հազարաց, զառաջինն յարձակեցան ի վերայ
յաջակողմեան գնդի նոցա յաջ և յահեակ կո-
տորելով։

Իսկ նոքա յանկարծակի իբրեւ տեսին զայն
ահեղ յարձակումն և կոտորած ի վերայ ինքեանց
հասեալ, առ հասարակ խռովեալք և խուճապեալք
դիմեցին յերկրորդ, և յերրորդ խումբսն զաղա-
ղակ բարձեալ թէ՛ հասին կոտորեցին սպառեցին
զմեք քրիստոնեայքն, և զայն իբրեւ լուան ամե-
նեքեան հիացան, ափշեցան տկարացան ի խոր-
հուրդս իւրեանց, լքան լուծան, և անկաւ ահ
ի տեառնէ ի վերայ նոցա. զի մինչդեռ ակն ու-
նէին մեծի յաղթութեան, զբռամբ ամեղոյ գա-
մուրն, յանկարծակի եհաս նոցա այն անողորմ
կոտորած (էջ 40)։

Եւ յետ այսորիկ բաթալի խանն, և զօրք օս-
մանցւոց, ի գիշերի միում գան, և հարկանեն
զերիս գիւղս հայոց, և կալեալ զերիս զօրապետս
ածեն ի պարկուշատ։ Եւ իբրեւ գայն լսէր տէր
աւետիսն՝ վաղվաղակի զգօրսն ժողովէր, և յետ
երկուց աւուրց յերկիրն պարկուշատայ արշաւէր,
և գիշերայն ի վերայ հասանէր, հարկանէր գհար-
ուածս մեծամեծս, և զերկու թուրք զօրապետս
ձերբակալ առնէր, և զամենայն ինչս և զստա-
ցուածս նոցա յաւար ամէր ի չափնդուր։

իբրու ամենի ալիս ծովու յուզեալք ի բռնութենէ
հողմոց դարիւ և դարիւ գային մի զմիով անցա-
նէին, և ի մեքենայից անտի ի վերայ պարըս-
պացն դիմէին, և առ հասարակ յերկոցունց
կողմանց ձայն փողոյ, և ձայն թմբկաց, զոչին
զօրաց, շառաչուն հրալից գնդակաց, ճայթմունք
հրացանից զականջս խլացուցանէին։

14. Իսկ որք ի ներքս էին, իբրեւ գայն ահեղ
տեսիլ ի յամրոցէ անտի տեսանէին, զգնդաց
գնդաց այլասեռիցն, դրօշու դրօշու պատրաս-
տութիւն, զնշանացն փողփողել, և զճառագայթս
զինուցն զինուորաց. զգանգակս հնչեցուցանէին,
զնշխարս սրբոյն Մինասայ ի բազմոցի դնէին, և
ամենեքեան անկեալ առաջ սրբոյ սեղանոյն առ
Աստուած գոչէին, եպիսկոպոսունք, քահանայք
և ամենայն ժողովրդականքն, և կուսանք (զի էր
անդ նաեւ Մենարանինչ կուսանաց, ուր բնա-
կէին քառասուն, կամ յիսուն կուսանք), զի ա-
մենեքեան զմահն առաջի աչաց ունէին (էջ 48-49)։

17. Ո՞վ սքանչելեացս, ո՞վ մեծի բարեգթու-
թեանցն Աստուծոյ, զի երեք հարիւր (300) վա-
ռեալք ի յութերորդ ժամու աւուրն, ձայն ետուն
խրախոյս բարձին, յարձակեցան միահամայն
ի վերայ եօթանասուն հազարաց (70000). առա-
ջինն յանկարծակի յարձակեցան ի վերայ յաջա-
կողմեան գնդի նոցա յաջ և յահեակ կոտորելով։

18. Իսկ նոքա յանկարծակի իբրեւ տեսին
զայն ահեղ յարձակումն և կոտորած ի վերայ
ինքեանց հասեալ, առ հասարակ խռովեալք, և
խուճապեալք դիմեցին ի յերկրորդ, և ի յերրորդ
խումբսն զաղաղակ բարձեալ թէ՛ հասին՝ կոտո-
րեցին զմեք քրիստոնեայքն. և զայն իբրեւ լուան
ամենեքեան՝ հիացան, ափշեցան, տկարացան ի
խորհուրդս իւրեանց, լքան, լուծան և անկաւ
ահ ի Տեառնէ ի վերայ նոցա. զի մինչդեռ ակն
ունէին մեծի յաղթութեան, զբռամբ ամեղոյ գա-
մուրն, յանկարծակի եհաս նոցա այն անողորմ
կոտորածն (էջ 50-51)։

58. Եւ յետ այսորիկ Բաթալի խանն, և զօրքն
Օսմանցւոց ի գիշերի միում գան, և հարկանեն
զերիս գիւղս հայոց, և կալեալ զերիս զօրապետս
ի Բարքուշատ ածեն։ Եւ իբրեւ գայն լսէր Տէր
Աւետիսն, վաղվաղակի զգօրսն ժողովէր, և յետ
երկուց աւուրց յերկիրն Բարքուշատայ արշա-
ւէր, և գիշերայն ի վերայ հասանէր, հարկանէր
զհարուածս մեծամեծս, և զերկու թուրք զօրա-
պետսն ձերբակալ առնէր, և զամենայն ինչս և
զստացուածս նոցա աւար ամէր ի Չափնդուր։

Եւ եղեւ ի ժամանակի յայնմիկ հիւանդանալ դաւթի, և մեռանիլ իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի հալի ձոր, յամի տեառն 1728ին, և ի թուին հայոց ճ չ Է. կեցեալ ամս վեց յիշխանութեան իւրում ի խափան (էջ 53):

Աւելորդ կը համարինը դեռ երկարել համեմատութիւններ. մէջ բերուածները շատ խօսուեն են արդէն, և ընթերցողն ինքնին վստահօրէն պիտի հաստատէ թէ անկասկած վեհեակեան ձեռագրի մէկ օրինակն է Գուլամիրեանի ձեռքն ընկած պատմական գրուածը:

Կէտ մը կայ սակայն խնդրական՝ որուն ազնարկած ենը յօդուածի սկիզբէն, այսինքն Տէր Աւետիքը քահանայի վերաբերեալ հարցը. տեղն է որ հոս քննենք զայն. մանաւանդ անոր համար որ, հակառակ մեր ըսածին և պնդածին, Մխիթարեան աղբիւրներն և Գուլամիրեան հիմնովին կը

59. Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ հիւանդանալ Գաւթի, և մեռանիլ իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալիձոր, յամի տեառն 1728, և ի թուականութեանն Հայոց 1177, կացեալ ամս վեց յիշխանութեան իւրում ի խափան (էջ 67-68):

տարբերին իրարմէ: Հարց է ուրեմն թէ՛ Հայ ազատագրական շարժման ողբալի քայքայումէն վերջ ինչ եղաւ և ո՞չ զկաց Սահտիք քահանայ՝ մէկը Գաւթի բէկի քաջ զօրավարներէն:

Մխիթարեան ձեռագիրները համաձայն են ըսելու՝ թէ ան Հոռոմ զկաց Ս. Քա. հաւայապետէն ներում խնդրելու իր այնքան թափած արիւնին համար (քանի որ իրրեւ քահանայ խաչի և Աւետարանի պաշտօնեայ էր և ոչ սուրի և հրացանի). իսկ Գուլամիրեանինը զանիկա Երուսաղէմ կը ղրկէ՝ նոյն նպատակով: Տեսնենք բնագիրները:

Ա. Ձեռ. Հ. ՂԱԿԱՍԻ

Եւ Տէր Աւետիքն յայնմիկ ժամանակի փախուցեալ (ժամանակ ինչ բնա) զայ ի զաղատիայ, և անտի (եկեալ ի Վեհտիկ) զիմաւ առ սրբազան հայրապետն հոռոմայ և առնու զնորումն:

Բ. Ձ. ՄԽԻԹ. ՀԱՐՑ

(Տէր Աւետիքն) եւ փախուցեալ ի նոցանէ անկաւ առ փաշայն, որոյ հրամանաւ առեալ զընտանիս իւր՝ զնաց քնակեցաւ ի զաղատիայ, և էառ զնորումն ի սրբազան Հայրապետէն հոռոմայ (էջ 55):

ԳՈՒԼԱՄԻՐ. ՀՐՏ.

(Տէր Աւետիքն) փախուցեալ ի նոցանէ անկաւ առ փաշայն. որոյ հրամանաւ առեալ զընտանիս զնացեալ ընակեցաւ յԵրուսաղէմ, և յետ բազում ապաշխարանաց էառ զնորումն ի Ս. Պատրիարքէն Հայոց, հաճութեամբ և համաձայնութեամբ Տէր Աբրահամ Աբրահամազոյն կաթողիկոսի ամենայն Հայոց (էջ 69-70):

Մխիթարեան կրկին ձեռագիրներուն համեմատ կը պատմէ նաեւ Չամչեան՝ Հոռոմ ղրկելով Տէր Աւետիքը, աւելցնելով թէ.

«Ըստ որում սովորութիւն էր ազգին՝ յայսպիսի մեծամեծ իրադիւմել ի գահն Հոռովմայ». յետոյ ունի վերջին յաւելումս՝ մ'աղբէ «և յետ կալոյ նորա զժամանակ ինչ յայնոսիկ կողմանա՝ դարձաւ անդրէն յարեւելս, և անդ վախճանեցաւ¹»:

Գուլամիրեան սոյն կէտի մասին ծանօթագրելով՝ զարմանք կը յայտնէ Չամչեանի տողերուն (իրեն անձանոթ ըլլալով Մխիթարեան ձեռագիրները) բոլորովին տարբեր գտնելով զանոնք իր առջեւ ունեցած ձեռագրէն.

«Զարմանամք թէ Հայր Միքայէլ վար-

դապետն Չամչեանց... ուստի՞ զիտացեալ՝ կամ յորպիսի աղբերաց առեալ՝ վստահանայ ինքնաստեղծ պատմութեամբ յօրինել զնոր իմն սովորութիւն Ազգիս, գրելով» եւն:

Յետոյ կ'աւելցնէ՝ թէ ո՛չ մէկ հայ կամ օտար պատմիչ նման սովորութիւն մը չէ աւանդած. այլ թէ աւանդութիւն էր վիճակաւորին զիմել և անոր միջնորդութեամբ կաթողիկոսին կամ Երուսաղէմի Պատրիարքին:

Բաժնի ալ իր կարգին կը կրկնէ Գուլամիրեանի ըսածները, զժախտաբար թըլթու և անարդար յարձակում մը գործելով Չամչեանի վրայ, ինչպէս նաեւ Աւետիքը:

1. Պատմ. Հայոց. Գ. գիրք 2. գլ. 100, էջ 800.

տիք քահանային՝ չկարենալով ծածկել իր հակակղերական զգացումը՝ որ ուրիշ տեղեր և ուրիշ վէպերու մէջ ալ երբեմն արտայայտած է: Ահա տողերը՝ որոնցմով կը վերջացնէ իր «Գաւթի բէկ»ը.

«Տէր Աւետիքը՝ այդ անպարտելի հերոսը, տեսնելով Հայոց անմիաբանութիւնը, թողեց Հայաստանը և գիմեց Երուսաղէմ: Այնտեղ նա Աբրահամ կաթողիկոսի հաճութեամբ ներումն ստացաւ պատրիարքից այն բոլոր արիւնների համար, որ նա թափել էր: Կրօնական մուկեանութիւնը վերջապէս տիրում է այդ քաջի սրտին, նա սկսում է ապաշխարել». և կը ծանօթագրէ «ծիծաղելին այն է, որ հայր Չամիչը, որը սիրում է իւր պատմութեան մէջ շատ հայկական երեւոյթներ կաթողիկոսեան ստուերի մէջ ծրարել, այդ - մուկեանդ Մխիթարեանը խիստ ոգեւորութեամբ խօսելով Տէր Աւետիքի վերջին վարմունքի մասին, նրան փոխանակ Երուսաղէմ, Հոռոմ է ուղարկում պապից թողութիւն խնդրելու իր մեղքերի համար»:

Հարկ կայ ըսել թէ մուկեանութիւնը ո՛ր է: Չամչեանի պէս գիտնական և ազգասէր Մխիթարեան մը բացարձակապէս չէր կրնար կեղծել. չէ՞ որ ան հիմնապէս կաղապարուած Մխիթար Աբրահօր գործադրած և կտակած անսխալ սկզբունքով՝ զիտէր զանազանել ազգը կրօնքէն և երբեք չզոհել մէկը միւսին:

Վստահ ենք թէ անաչառ և ուղղամիտ ընթերցողներուն համար առաւելօքն պիտի բաւեն Մխիթարեան հնագոյն կրկին ձեռագիրներու և Չամչեանի պատկանելի հեղինակութիւնները՝ հաստատելու համար հակառակ Գուլամիրեանի և մանաւանդ Բաժնի ծանր զրպարտութեան՝ թէ արդարեւ Աւետիքը քահանայ Հոռոմ գացած է և ոչ թէ Երուսաղէմ:

Սակայն կ'ախորժինք մէջ բերել նոր վկայութիւն մը որ յինքեան ծանրակշիռ է և հիմնապէս կը մերկացնէ Գուլամիրեանի աղբիւր - ձեռագրին մէջ կատարուած կեղծիքը:

Հետաքրքրական վկայութիւնը մեզի կու-

տայ Արսէն Վ. ՂԱՃԵԱՆ (այժմ արքեպս.) «Արարատ» թերթին մէջ «Նիւթեր Գաւթի բէկի պատմութեան վերաբերեալ» յօդուածով: ՂԱՃԵԱՆ կըսէ.

«Մայր Աթոռի Մատենադարանի թ. 450 (գ. ց. նոր գրչութիւն) կանոնագիրքը պարունակում է իր մէջ՝ ձեռագրի վերջում «Պատմութիւն ինչ անցից ի Սիւնիս յետոյ» 74 քառածալ երես ընդամենը: Պատմութեան սկզբից պակասում է 20 երես: Աւելորդ է կանգ առնել պատմութեան բովանդակութեան վրա եւն»:

Յետոյ կ'ըսէ թէ ան նոյնն է Գուլամիրեանի հրատարակութեան հետ, աւելցընելով թէ.

«Ձեռագիրը արտագրուած է եղել, կ'ըսէ, 1759 թուից առաջ գրած օրինակից: Արտագրել է «Զմիւռին» քաղաքում Դանիէլ գրչի ձեռքով. իսկ առաջին յիշատակարանն աւարտուել է 1759 թ. յունւարի 20ին «Ամթերօգամ» քաղաքում:

Մայր Աթոռի ձեռագիրն արտագրութիւն է Զմիւռնիայում արտագրուած օրինակի: Արտագրողն է Եսայի Աւագեան, որ ընդօրինակել է 1847 թ. ս. Էջմիածնում: Առաջին ձեռագրի մէջ ամենամետաքրքրական մասը, որով նա էապէս տարբերում է Գուլամիրեանի հրատարակած «Գաւթի բէկ»ի պատմութիւնից, վերաբերում է Գաւթի բէկի զօրականներից՝ Տէր Աւետիքին»:

Ապա յիշելով թէ Չամչեան Հոռոմ կը ղրկէ Աւետիքը կ'ազնարկէ Գուլամիրեանի զարմանքին և տարակուսանքին և կ'աւելցնէ.

«Եւ իրօք մինչեւ օրս էլ տարակուսելի և չստուգուած էր մնում այն հանգամանքը, թէ ձիւշտ է որ Տէր Աւետիքը զիմած լինի Հոռոմի քահանայապետի ներողամտութեան:

Մեր ձեռագիրը, որ արտագրւած է Գաւթի բէկի մահանից 31 տարի յետոյ, ուրեմն ժամանակակից մարդու ձեռքով, ասում է. էլ չենք ասում, որ պատմութիւնը ինքը գրւած է ժամանակակցի ձեռքով: Բերենք ձեռագրի յիշատակարանից կտորներ:

Բայց զտէր Աւետիքն փաշայն եթող ի Հալիձոր, իբրեւ նորա չուեցին անտի, այլ

1. 1905, Ապրիլ, էջ 382-387.

2. Մեղք որ այս ձեռագիրն ալ տարաբախտութեան

հանդիպած է իր սկզբնաւորութեամբ, ուր անշուշտ հեղինակին անունը պիտի տեսնէինք (Հ. Ղուկասին),

զօրք Օսմանցեաց անդր հասին. նորա փախուցեալ ի նոցանէ, անկաւ առ փաշայն, որոյ հրամանաւն առեալ զընտանիսն՝ գնացեալ բնակեցաւ ի Գաղատիա. և էառ զնեւրումն ի Հայրապետէն Հոռմայ» (61 երես.)

Այս և ուրիշ մէջբերումէ մը յետոյ Ղլղճեան կը հետեւցնէ թէ «Աւետիք յուսահատուած թողնում հեռանում է հայրենիքից և ապաստանում ի Գաղիա¹»: Եւ թէեւ ինք ալ իր կարգին զարմանք կը յայտնէ Աւետիքի այդ վարժունքին, սակայն կը խոստովանի թէ կեղծիք չկայ Ձեռագրին մէջ, և հետեւաբար ստոյգ է որ Աւետիք Հոռմ գացած է, հակառակ Գուլամիրեանի բնագրին որ կեղծիք ըրած է դերեր փոխելով. ահա թէ ինչ կը գրէ Ղլղճեան, հակառակ անոր որ ոչ մէկ յարում կամ սէր ունի դէպի Կաթողիկէ եկեղեցին և անոր գլուխը:

«Մտածել ձեռագրի մէջ կեղծիք մտած լինելու մասին՝ շատ դժւար է: Մենք հակառակ ենք կարծելու, որ այն ձեռագիրը որից արտատպւած է Գալիթ բէկի պատմութիւնը, դժւար թէ չունենար այն կտորները որ մենք առաջ բերինք: Մեզ թուում է, որ պարզամիտ ազգասիրութեամբ «Գաղատիա» գաղթելը վերածել է Երուսաղէմ ուխտ գնալուն, և Հոռմի քահանայապետից ներումն խնդրելը՝ Հայոց պատրիարքից ներում խնդրելուն և այլն²»:

Ի հաստատութիւն Աւետիքի Հոռմ երթալուն կ'արժէ մէջ բերել Ղլղճեանէ յիշուած յիշատակարաններէն հետեւեալն ալ, որ շատ խօսուն է և ուր եթէ կեղծիք չի գործուիր, սակայն խկապէս մոլեռանդութիւն, դատապարտելով Աւետիքը իր այդ արարքին համար:

«Դարձեալ յայտ լիցի սիրելի և բարեպաշտ ընթերցողացդ, զի ի 39 թղթահամարի անտ յիշի ի քաջագօր քահանայէն Աւետիքէ, թէ յետ այսքանեաց յաղթու-

թեանցն և ի մրցմունս սաստկալի պատերազմացն, յերկեալ ի փաշայէն, զի մի ըմբռնեալ սպանանիցեն, հանդերձ ընտանեօքն փախստական լեալ գայ հասանի ի յերկիրն Գաղատիա. և անդ ենթարկեալ զինքն ընդ հրաւանօք Պապիկն (ընկալնոյր զներումն մեղանացն) այլ արդէն սակաւիկ ձանձրութիւնս տալս իմ սիրեցեալդ, միայն հրաբորբօք բաղձանացս վասն հայրենեացս իմոց առ այս գործ ձեռնամուխ արար ինձ. սակայն չգիտելով զանունն պատմագրողին զի մարթանայի ընդ նմին եւս պատասխանել նմա՝ վասն գրելոյն իւրոյ թէ (ընկալաւ զներումն ի սրբազան Պապէն), բայց այս եւեթ ունիւմ յԱւետիք քահանայէն, զի աւաղ կուրու թեանս մտաց զի զառաջին սրբութիւնն աւարդեալ...»:

Զանց կ'ընեմ անվայել և ծանր խօսքերը որ դեռ կը շարունակուին, մինչեւ առաքելական խօսքերով նզովելը Աւետիքի այդ պատմական արարքը. «եւ ի մէջ, այլ ոչ էր ի մէջ, զի եթէ ի մէջ էր, միայր առ մեզ» եւն:

Կը համարեմ թէ ի զուր է դեռ երկարել և նոր փաստեր որոնել, քանի որ հակառակորդներն ալ կը խոստովանին թէ Աւետիք Հոռմ գացած է և ոչ Երուսաղէմ:

Շինելու համար գայթակղած մտքերը՝ վերի յիշատակարանի կարեկցելի նախանձայող հեղինակին, Գուլամիրեանի և նրմաններու, որոնց այնքան խորթ և մինչեւ դատապարտելի կը թուի Աւետիք քահանայի ըստ ինքեան ամենագովելի արարքը, կը բաւէ աչքէ անցնել մեր Հայրերու վարդապետական գրուածներ ու եկեղեցական մատենաները, սորվելու համար մեր Հայ եկեղեցւոյ և անոր հարազատ և ուղղափառ զաւակներուն՝ Հայ Հայրապետներուն և վարդապետներուն հաւատքին, յարգանքին և սիրոյն չափը առ:

«Սուրբ եւ առաջին ամենայն եպիսկոպոսաց՝ Հայրապետն Հոռմայ եւ փոխա-

բար ամենքն Գուլամիրեանի օրինակի կեղծիքին հետեւած են հակառակ Չամչեանի, և հակառակ Ղլղճեանի այդ մերկացումներուն: Այսպէս վերջիններէն՝ Կեթիմակերկ մատ. թ. 8 Պատմ. Հայոց (1911, էջ 411), Հ. Ս. Տէր Մովսէսեան (1914), Յ. Չազմագեան (1917) եւն:

նորդն Պետրոսի առաքելոյ (ՇՆՈՐՀԱԼԻ). — «Չեզ՝ որ էքդ գլուխ յետ Գրիստոսի, սըրբեալք ի նմանէ եւ գլուխ կանոնիկէ եկեղեցւոյդ Հոռմայեցւոց, ամենայն եկեղեցեաց մօր... Գրիգորիոս ծառայ Յիսուսի Գրիստոսի, շնորհօքն Աստուծոյ կանոնիկոս համօրէն եկեղեցւոյս Հայաստանեայց, որդի սրբոյ եկեղեցւոյդ՝ որ է հիմն օրինաց համօրէն քրիստոնէութեան» (ԳՐԻԳՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՊՈՒՍ):

Մենք զիւրաւ կրնայինք, հինէն ու նորէն, երկարել նման վարդապետական փաստեր, և կամ թուել շարքը հայ աշխարհիկ և եկեղեցական անձերուն որոնք ուխտի կամ դաւանական տեսակէտով դիմեր են Ս. Քահանայապետին՝ մէջն ըլլալով նաեւ Կաթողիկոսներ, բայց չենք ուզեր զեղծանիլ՝ հեռանալով մեր նպատակէն: Միայն հարկ է շեշտենք Աւետիք քահանայի աւարքը որպէս ամենագովելի և համեմատ Հայ եկեղեցւոյ ուղղափառ հաւատքին, քանի որ ան վերջապէս կը դիմէ ներում հայցելու անկէ՝ որ գլուխ է յետ Գրիստոսի, այն եկեղեցիէն՝ որ մայր է բոլոր եկեղեցիներու:

Աւետիքի հաւատքով և համոզումով էր նաեւ անոր զինակից ու մարտակից Շահումեանը և իր ընտանիքը վեհեկոյ մէջ¹ և դեռ ուրիշներ²:

Այս վկայութիւններէն կը հետեւի Չամչեանի անկեղծութիւնն և հաւատարմութիւնը՝ նկատմամբ Աւետիք քահանայի վերջին արարքին պատմական ճշմարտութեան:

Յոյց տալու համար թէ Չամչեան նոյնպէս անկեղծ և հիմնաւոր է իր միւս խօսքերուն մէջ ալ՝ երբ Աւետիք քահանայի ներման խնդրոյ մասին կ'աւելցնէ «Ըստ որում սովորութիւն էր ազգին՝ յայսպիսի մեծամեծ իրա դիմել ի գահն Հոռմայ», մէջ կը բերենք Ժ. Դարու հին պատմական փաստ մը՝ որուն յոյն աղբիւրներ ալ կը վկայեն:

«Քահանայ ոմն էր արժանաւոր զարդարեալ ամենայն առաքինութեամբ և սրբութեամբ՝ յԱզգազնունեաց գաւառին՝ որ կոչի Գոգոյիտ, ի գեղն որ Բզրայրի գոմ անուն կոչի. և ի գեղն բնակեալ էր այր մի պատուական ի տանուտիրական տանէ. և խարեալ զնա սատանայ չարութեամբ յայսմ նուագի, անգեղը և անդառնալի խորհրդով արհամարհէր զքահանայն Աստուծոյ, և անարգէր զնա զարչելի և տգեղագոյն բանիւք սաստիկ վիճելով ընդ երկար աւուրս: Զայրացեալ սըրբոյ քահանային նզովեաց զնա դառնապէս, և ըստ աստուածատուր իշխանութեանն զոր ունէր ի ձեռին իւրում՝ զկապելն և զարձակելն ի յերկինս և յերկրի, կապեաց զնա բանիւ և զօրութեամբն Աստուծոյ՝ յանուծանելի կապանս իմանալիս հոգեկաշկանդ խեղդմանց, ոչ կարացեալ արձակել զնա ումեք, բայց եթէ բանիւք բերանոյ իւրոյ և մատամբ սրբոյ աջոյ ձեռին նորա: Ապա եհաս վախճան քահանային զնալ զճանապարհս հարց իւրոց՝ ըստ օրինակի ամենայն կենդանեաց. և նա մնաց անգեղը սրտիւ յանել բանտի ի տան կապանացն: Ապա ուրեք եկեալ ի միտս իւր, և գիտացեալ զհիգութիւն կորստեան անձին իւրոյ, ըստ մարգա-

1. Այդ կրօնական տեսակէտին շուրջ կ'անդրադառնայ նաեւ Ալեքան հեզ ու փափկանկատ ձեւով, հոն՝ ուր կը խօսուի Ա. Շահումեանի և Աւետիք քահանայի մասին. «Եկատասան... է հայրենիք թելադրի Պատմութեան Ղափանեցոց, կամ Գալիթ բէկի, որպէս և յիշեցաք ոչ սակաւ ուրեք, այն է Ստեփանոս Շահումեանց, որդի վարդանիսի կամ վրթանիսի, միոյ ի զօրավարաց նոցին. զոր՝ իբրեւ զլուսւոր կամ սիրելագոյն անձն՝ ընտրեալ է Ութֆի ի ծանօթ վիպասանութեանն, պէսպէս դիպուածս ստեղծարանելով ըստ ըմաց հաճոյից. որ ինչ ստոյգ էր՝ յիշեցաք ի կարգի տեղագրութեանս. իսկ որ յետ այնց դիպաց՝ անծանօթ միայր նա, և զի մի՛ եւս մնացէ, և մի օտարութի իմ կարծիքի գալուստ նորա յարեւմտոս և յարել ընդ միաբանս Հոռմեական եկեղեցւոյ, (որպէս կարծէ հեղինակ յետին՝ ծանօթութեան

վիպասանութեանն, և փոփոխէ զաթոն յոր դիմաց միւս եւս նշանաւոր ներգործող յանցա պատերազմացն՝ Տէր Աւետիք), արժան համարիմ յայտ առնել, զի բազում ժամանակօք յառաջ ծանօթ էր տոհմն Շահումեանց ի քաղաքի աստ իտալիոյ յորում գրեմս» եւն (Սխալակե, էջ 300):

2. Ուխտի Ժամանակագրութիւնն ալ բաց ի Շահումեաններէն, զորս կը յիշէ թէ «Ելն ի Վեհէժ յազգէ մերմէ եղբարք երկու հարուստ վաճառականք ի Հաբանդ երկրէ... Ստեփան... և Նահապետ» (1737), նախապէս կը խօսի ուրիշ Ղափանցիի մը մասին ալ. «պատանի մի էր աստուածասէր ի վաճառականութիւն եկեալ յարեւելից Յովհաննէս անուն ի Հաբանդ երկրէ Հայաստանեայց» եւն. (1736), Թերեւս Գալիթ բէկի քաջերէն մէկը որ միւսներուն պէս Արեւմտեց դիմեց քայքայումէն վերջ:

1. Չհասկցանք թէ այս ձեւը գրչի վրիպակ մըն է, թէ՛ դիտումաւոր: Ստորեւ սակայն Գաղատիա կը գնէ ձեռագիրներուն համեմատ:

2. Ազգային պատմութեան ուսումնասիրութիւններ և դասագիրքեր՝ գրեթէ առանց քաջառութեան, զժբախտա-

բէին, թէ Յորժամ դարձցիս և հեծեծեցես և յոգեոց հանցես՝ ապա գիտասցես թէ ուր իցես. սկսաւ այնուհետեւ կոծել զկուրծս իւր՝ լալով և ողբալով, վա՛յ և եղուկ զանձն իւր կարգալով՝ վասն անգիւտ կորստեան անձինն իւրոյ. հարցանէր ցգիտունս գրոց և ցհմուտս օրինացն Աստուծոյ, թէ արդեօք իցէ՞ դեղ անբժշկելի ցաւոյս, և կամ հնար գերծանելոյ յ'անել գբոյ կորստեանս: Պատասխանի ետուն նմա և ասեն, թէ, Չիք քեզ հնար բժշկութիւն գտանել դառն վիրիդ կամ արձակել յանխզելի կապանացդ, բայց միայն թէ ուղեւորիս ընդ երկայն ճանապարհ որ տանի ի գլուխն տիեզերաց ի մեծն Հոռոմ, ուր են Սուրբ Առաքեալքն Պաւղոս և Պետրոս, սինք եկեղեցւոյ, արձակողքն կապելոց և տուողքն կենդանութեան. նոքա կարեն արձակել զքեզ ի հիւանդութենէդ քում մէ. ընթացիր վաղվաղակի:

Չայս լուեալ նորա՝ ջերմեանդն սրտիւ հառաչագին արտասուօք անյապաղաբար յուղի անկեալ, առ ոչինչ համարելով զանհնարին երկայնութիւն ճանապարհին, վաճառեալ զամենայն ինչս իւր, ընդ իւր տանելով թուշակ առ ի պէտս առաջի եղեալ ճանապարհին. յաջողեալ նմա ի Հոգւոյն Սրբոյ շնորհաց, ըստ մեծահաւատ աշխատութեանն իւրոյ՝ եհաս ի թագաւորեալ քաղաքն ի մեծն

1. Հոս կը գետեղենք քանի մը տուն ալ նոյն պատմական գրուագին տաղաչափուած ձեւէն:

Իսկ անէծք և նովբերն քահանային՝
կապեալ ըզտանուտերն անդերծանելին.
Իսկ նա անփոյթ առնէր յիմարեալ հոգին,
Մինչեւ եհաս վախճան սուրբ քահանային:

Ապա որպէս թմրեալ ի բազում գինոյն՝
ի միտս եկեալ ծանեալ զպատիժ իւր հոգւոյն.
Բախէր զսիրտս և կոծէր ի բազում սըղոյն,
Վա՛յ և եղուկ կարգայր անձին իւրոյն:

Ելեալ առ վարդապետսն չըջագայեալ՝
Դեղ անողջանալի վիրացն հարցեալ.
Նոքա ամենեքեան զայս պատասխանեալ,
«Ո՛չ ուստեք չիք ճար՝ բայց այն որ կապեալ»:

Եւ արք յիմաստնոց նոքա ասացին,
Գնալ ի յարեմուտս՝ յերկիրն Լատին,
Առ Պետրոս և Պողոս աշակերտք Փրկչին,
Մայրաքաղաքն ի Հոռոմ՝ յաշխարհ Ֆրոնտին:

«Ձի նոցա ետ, ասեն, Տէրն՝ ըզբանալին
Երկնից արքայութեանն յաւիտենին,
Եւ համարձակ խօսին հետ Կենարարին,
Եւ միշտ բարեխօսեն վասն ում և կամին»:

Հոռոմ. դիմեալ յերկնաման սուրբ եկեղեցին, անկեալ առաջի պատրիարքին զոր Պապիսն կոչեն, և պատմեաց զամենայն անցս աղետից իւրոց նա և զպատճառս զալոյն: Յայնժամ կոչեաց երանելի Հայրապետ զբովանդակ ուխտ սրբոյ եկեղեցւոյն, և ասաց նոցա զամենայն, և խնդրեաց ի նոցանէ այսպէս ասելով. Այրս այս դիմեալ յարեւելից մինչեւ ի մուտս արեւու՝ եկեալ եհաս առ մեզ՝ մեծափափագ և պինդ հաւատով. եկայք եղբարք, աղաչեսցուք զտէր Աստուած մեր՝ վասն սորա, և զսուրբ զԱռաքեալսն, զի բացցեն սմա զդուռն ողորմութեան զթուլութեանն Աստուծոյ, և ազատեսցեն զսա յայն պիսի դառն նեղութեան կապանաց:

Աւետիքի արարքին պատմական ստուգութիւնը իր կարգին կարծես մեզի իրաւունք կու տայ ստուգելու և հաստատելու ուրիշ հետեւանք մ'ալ. այն է՝ թէ Աւետիքը քահանայ եւս մէկն է Դաւիթ բէկի պատերազմներու պատմութեան թելադրողներէն, որով զինքն ալ կրնանք թուել Շահումեանի կարգին իրրեւ վկայ և պատմող աղբիւր. վասն զի չափազանց դժուար է որ Աւետիքը իտալիա եկած ըլլայ առանց

Ձոր անյապաղ ելեալ և անդէն դընաց,
Ընդ ծով և ընդ ցամաք ճանապարհ հորդեաց.
Գնացեալ ի Հոռոմ, լալով և երկըրպաղեաց
Նըշխարացն սրբոց Տեառն աշակերտաց:

Մըտեալ առ Պապն՝ ասաց զպատճառն երթալուն
Եւ ըզկապել նորա յիւրմէ երկցուն:
Իսկ նա վաղվաղակի զուխտ եկեղեցուն
Կոչէ, և ասէ նոցա ըզգործ եկելուն:

Ասէ. թէ, «Աշխարհաւ ու աղգաւ սա Հայ է,
Եւ ի քահանայէն իւրմէ կապեալ է,
Եւ հաստատուն յուսով առ մեզ եկեալ է
Յերկար ճանապարհաւ, որ մին տարոյ է»:

Ոտանաւորին հեղինակը յետ պատմելու ներման արժանի ըլլալը և Ս. Պետրոսի մասունքներէն մաս մը ձեռք ձգելը, կ'ըսէ թէ շատ նուէրներով կը դառնայ Հայաստան.

Եկեալ ի Կոզմիտ դաւառն Սասնոյ,
Եւ զպատիշ հոգւոյն իւր և մարմնոյ՝
Եւ ի յեկեղեցիներն Գոմ Բըծայրոյ.
Եւ ինքն անդէն հանդեաւ ի փառս Աստուծոյ:

(Տես «Հայագատուած» Ժ. Գար, Թ. 234, էջ 295-300
«Գիշտ մատին Սրբոյ առաքելոյ Պետրոսի, թէ զիարդ եղեւ կտրուիմ կամ որպէս բերաւ ի Հայս» արձակ և ոտանաւոր գրուագները իրենց ընդարձակութեամբ:

վենետիկ հանդիպելու. ատոր փաստ կը ներկայանան՝ ոչ միայն Հ. Ղուկասի խօսքերը կէս մը եղծուած, թէ «եկեալ ի վեներիկ՝ դիմեալ առ Ս. Հայրապետ Հոռոմայ», այլ նաեւ Ազգերեանի յայտնի վրկայութիւնը Չեռագրաց ցանկին մէջ՝ ուսկից մէջ բերենք վերեւ «առեալ ի րերանոյ Տէր Աիւեսի և այլոց»¹. զժբախտաբար ուրիշ յիշատակ չգտանք այդ մասին:

Ամփոփելով մեր պրպտութենքը պիտի ըսենք թէ իրրեւ յականէ անուանէ յիշուած ականատես վկաներ և աղբիւրներ Դաւիթ բէկի պատմութեան կը ներկայանան

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄԵԱՆ և
ՏԵՐ ԱԻՅԵՏԻ ՔԱՀԱՆԱՅ:

Թելադրողներէն յետոյ իրրեւ գրի առնողներ և մեզի աւանդողներ այդ ազգային դիւցազնական էջերուն պէտք է երախտագիտութեամբ արձանագրենք Միւթարեան Ուխտիս անունը՝ յանձին Հ. Ղուկասի որ ստոյգ է, և յանձին ուրիշներու որ անծանօթ կը մնան, և որոնց գործը շատ մեծ առաւելութիւններ ունի Հ. Ղուկասի գործին վրայ:

Յատուկ և խորին երախտագիտութեան արժանի սակայն Հ. Միքայէլ Չամչեան պատմահայրն է, որ մեծ արդիւնքն ունի Գուլամիրեանէ հարիւր տարիներ առաջ իր հսկայ հատորներու անմահ էջերուն մէջ գետեղած ըլլալուն համար այդ պատմական զրուագները, և թող մեր երախտագիտութեան փոքրիկ տրիտուրն ըլլայ գործը՝ որով ուղեցինք սրբել իր անուան վրայէն ստորին և անարգ զրպարտութիւնը՝ մուկնաւոր և խարդախողի:

Իրրեւ աւարտ կը հրատարակենք մեր խոստացած ներքող-քերթուածը Աւետիքի մասին՝ ժամանակակից Սահակ² անուն «յարգելի երեց»է մը, ինչպէս կ'աւանդեն մեր Միւթարեան ձեռագիրները, Սյոդոտա նաւորը այդ ձեռագիրներուն մէջ ալ իրրեւ

1. Գուլամիրեանի ձեռագրին մէջ Ս. Շահումեան և այլ ունեք կը ներկայանան.
2. Տես ոտանաւորի տուններուն առաջին տողերու սկիզբը՝ Ի Սահակի:

վերջաւորութիւն կը ներկայանայ. գետեղուած է անմիարանութեան դէմ գրուած սրտցաւ տողերէ (որոնք Միւթ. Բ. ձեռագրին և Գուլամիրեան մէջ միայն կը գրտնուին) և ռազմաբեմի վրայ դերակատար մարտիկներուն նուիրուծ ցանկէն վերջ՝ որ այսպէս կը սկսի «Այսորիկ էին զօրավարք և զօրապետքն Դաւիթ պէկին» և հուսկ,

«Եւ Տէր Աւետիսն ի նոյն Հալիճոր՝ չորեքհարիւր (400) արամբ: Այս Տէր Աւետիս արար զբազում մեծամեծ քաջութիւնս, որպէս և ի պատմութեանս իսկ տեսանի, զի էր կարի քաջ, և արիասիրտ, և զօրաւոր յոյժ բանիւք, և գործովք, և վասն այսորիկ նա յորմէ հետէ հեռացեալ ի հայրենի երկրէն պանդխտեցաւ ի գաղատիայ, բազումք յորդորէին զնա ի հայրենի նորին գաւառէ անդրէն դառնալ առ նոսա և պաշտպանել զերկիրն զայն. բայց նա հրաժարէր յաղազս պատուոյ իւրոյ քահանայական կարգին որպէս և ոմն յարգելի էրեցանց անտի գրեաց առ նա զայս ստանաւոր առ նոյն յորդոր:

Ի նուագիլ հայոց ազգի, ի դառն եւ նեղ ժամանակի: յաղթող զօրեղ երեւեցար, քաջ զինաւոր տէր Աւետիս:

Սարսին ի քէն ազգն տաճկաց. զի յաղթեցեր նոցին զօրաց: զարքայական զէնս Քրիստոս, տէր Աւետիս քեզ պարգեւեաց:

Արիական զօրք քոյին, յաղթեցեր չար Գրիգորին: զի ուրացաւ ըզՔրիստոս, դու կտրեցեր գլուխ նորին:

Հասեր արագ բերդն Մեղրին, սատակեցեր ըզԽարաճին: երեսնագար թուղթ Խարաճին, այրեցեր ի մէջ կրակին:

Ագնիւ զօրք քաջ եւ ընտիր, ագուլեաց դաշտն Տէպէիր: անարգողաց սրբոյ խաչին, տէր Աւետիս վրէժխնդիր:

Կրկին խնդրեմք արիանալ, Պալի պէկին զինուորանալ: Հայոց ազգին թեւ եւ թիկունք, տէր Աւետիս բարեաւ երթաս:

Էրէցս ապիկար անարժան, խնդրեմք սրբոյն համանգամայն: խաչեալ Աստուած տէր իմ Յիսուս, տէր Աւետիս քեզ պահապան:

Հ. ԵՂԱՍ ՓԵՋԻԿԵԱՆ